Արձանագրություն N 5

ՀՀ քննչական կոմիտեի կողմից համակարգչային և էլեկտրական տեխնիկայի ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀԷՏ-22/1** ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

12 սեպտեմբերի 2022թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մկրտչյան, Վ. Անդրեասյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Նազարյան

1. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 13.09.2022թ. ժամը 12:30-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝3, դեմ՝ 0:

2. 13.09.2022թ. ժամը 12:30-ին նիստը վերսկսելու և համակարգի կողմից 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Նիստը վերսկսվեց 13.09.2022թ. ժամը 12:30-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ Համակարգի կողմից 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Ներկայացված հավելված 1.2-ում (այսուհետ՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր) 4.3.3 և 4.4.3 կետերը ենթակա են շտկման՝ վարչատարածքային միավորը պետք է նշվի ք. Երևան:
- Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի արտադրողի անվանումը սյունյակում 2-րդ չափաբաժնի համար նշված չէ արտադրողի կազմակերպաիրավական ձևը:
- Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագիր դաշտում բացակայում է հրավերով պահանջվող «Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը» նախադասությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀԷՏ-22/1** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 13.09.2022թ.-ին նիստը կասեցնել՝ ծանուցել 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից **«ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. 15.09.2022թ. ժամը 10:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 15.09.2022թ. ժամը 10:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ **«ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ**-ն սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ**-ի հայտը գնահատել բավարար,

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝0:

4. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

4.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝

- 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ**-ին հայտարարել որպես ընտրված մասնակից:

4.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4.3 Անգործության ժամկետ է սահմանվում 2-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ **Գագիկ Արշակյան**

անդամներ՝ _____ **Վահագն Մկրտչյան**

_____ **Վահրամ Անդրեասյան**

քարտուղար՝ _____ **Սիրուշ Նազարյան**